



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ Մ Ա Ն

30 մայիսի 2019 թվականի N 609 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի  
N 704-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
Մ Ա Ս Ի Ն

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կառուցվածքում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) նախարարության կառուցվածքում ընդգրկված՝ նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող էլեկտրոնային արդարադատության և ինովացիոն ծրագրերի բաժինը վերակազմավորման միջոցով վերակազմակերպել ռազմավարական պլանավորման և էլեկտրոնային արդարադատության վարչություն հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման.

2) նախարարության կառուցվածքում ընդգրկված՝ նախարարության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող քարտուղարությունն անվանափոխել փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 704-L որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 11-րդ կետի 1-ին ենթակետը «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ լրացնել «արդարադատության ոլորտի բարեփոխումների ուղղվածության պլանավորումը,» բառերով.

2) 32-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին ենթակետով՝

«5.1) ուղղվածության պլանավորման և էլեկտրոնային արդարադատության վարչություն.».

3) ուժը կորցրած ճանաչել 32-րդ կետի 6-րդ ենթակետը.

4) 33-րդ կետի 6-րդ ենթակետում «քարտուղարությունը.» բառը փոխարինել «փաստաթղթաշրջանառության ապահովման վարչությունը.» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

2019 թ. մայիսի 30  
Երևան



Ն. ՓԱՇԻՆՅԱՆ